ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.07.2018թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը: Նիստը սկսվեց ժամը 11.25-ին և նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Ժամը 11.35 –ի դրությամբ նիստին ներկա էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը, Սեյրան Ղամբարյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության խմբակցության անդամներ՝

Սեյրան Աղաբեկյանը,Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ » կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը (համայնքի ղեկավարի առաջին տեղակալ), Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության խմբակցության անդամներ՝

Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության խմբակցության անդամներ՝

Կարինե Ղուկասյանը, Վահե Կռոյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Կարեն Բեկչյանը:

Ավագանու նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Վահե Դոխոյանը, Խորեն Վարդանյանը, Արման Ափինյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Հայկազ Սիմիկյանը, Սուրեն Կարապետյանը, Հրանտ Այվազյանը, Ռոմիկ Մարգարյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարողը ավագանու նիստն իրավազոր համարեց՝ 22 ավագանու անդամի ներկայություն և առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:
(Ավագանու նիստի տեսաարձանագրությունը առկա է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=rnibxbxcnXg)

Քվեարկությունից առաջ ավագանու «Լուսավոր Հայաստան» խմբակցության անդամները լքեցին ավագանու նիստերի դահլիճը և այլևս չներկայացան:

Կողմ՝ 14, դեմ՝ 3, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1.Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 2/42 հասցեում գտնվող հողամասը նվիրատվության պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին;

զեկ.՝Ս.Աբովյան

2. Վանաձոր համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին;

զեկ. Ն.Մամուլյան

3.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին;

զեկ.՝Վ.Գրիգորյան

4.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին;

զեկ.՝Վ.Գրիգորյան

5.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին;

զեկ.՝Վ.Գրիգորյան

6. «Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին:

զեկ.՝Գ.Բաղյան

7. «Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին;

զեկ.՝Գ.Բաղյան

8. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին;

զեկ.՝Գ.Բաղյան

9. «Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

զեկ.՝Ս.Աբովյան

10. Գոռ Ֆրունզիկի Խուդինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին;

զեկ.՝Ս.Աբովյան

1. ԼՍԵՑԻՆ –Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 2/42 հասցեում գտնվող հողամասը նվիրատվության պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ և պատասխանեցին ավագանու անդամների հարցերին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Նելսոն Մամուլյանը:

Զեկուցողը տարեկան աշխատանքային պլանը ավագանու անդամների ներկայացրեց էկրանին ցուցադրման եղանակով:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Որոշման նախագծով կատարվելու է փոփոխություն համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսային մասում 4 մլն 240 հազար դրամի չափով: Փոփոխություններն անհրաժեշտ էին հետիոտնային կամուրջների, համայնքային գույք հանդիսացող նստարանների հիմնանորոգման, Մյասնիկյան փողոցի վերջնամասում և 40-ամյակի հուշարձանի հարակից տարածքում գտնվող անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի կառուցման և ցանկապատման նպատակով:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Որոշման նախագծով կատարվելու է փոփոխություն համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսային մասում 3 մլն 500 հազար դրամի չափով: Փոփոխություններն անհրաժեշտ են համատիրություններին աջակցություն ցուցաբերելու նպատակով, որի շրջանակում կիրականացվեն բազմաբնակարան շենքերի տանիքների մասնակի նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման, ներքին օգտագործման ջրագծերի և կոյուղագծերի նորոգման, խաղահրապարակների, խաղային սարքավորումների ընթացիկ նորոգման, շքամուտքերի լուսավորության համակարգի տեղադրման, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում վերելակների հիմնանորոգման աշխատանքներ:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 14, դեմ՝ 3, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Որոշման նախագծով կատարվելու է փոփոխություն համայնքի 2018 թվականի բյուջեի ծախսային մասում 6 մլն դրամի չափով: Փոփոխություններն անհրաժեշտ են համայնքում երիտասարդական ծրագրեր իրականացնելուն աջակցություն տրամադրելու համար, Արջուտի աղբավայր տանող ճանապարհի մաքրման և հարթեցման աշխատանքների, ինչպես նաև հորդառատ անձրևներից հետո կուտակված մեծ քանակությամբ տիղմից և ավազից համայնքի փողոցները մաքրելու նպատակով աշխատանքներ կատարելու համար:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - . «Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

10.ԼՍԵՑԻՆ - Գոռ Ֆրունզիկի Խուդինյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Որոշման նախագծով, նման կարգով, հարգանքի տուրք է մատուցվելու 2017 թվականի փետրվարի 23-ին Արցախում զոհված կապիտան Գոռ Խուդինյանի հիշատակին:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ հիմնավորումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել որոշման նախագիծը:

Քվեարկությամբ կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը